ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՆ ԴԻՄԵԼ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

23.06.2015 13:38

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 23.06.2015 թվականի 176-Լ որոշմամբ այսօր հաստատվել է արագ արձագանքման հանձնախմբի գործունեության մասին կարգը։

Հանձնախմբի համակարգող է նշանակվել փաստաբան Գևորգ Մկրտչյանը։

Հանձնախումբը հասարակական հիմունքներով գործող մարմին է, որը՝

ա) արձանագրում է փաստաբանի մասնագիտական գործունեության ընթացքում փաստաբանի լիազորությունների իրականացման խոչընդոտման դեպքերը կամ փաստաբանի նկատմամբ այլ անօրինական գործողությունները .

բ) նպաստում է փաստաբանների մասնագիտական գործունեության ընթացքում փաստաբանների լիազորությունների իրականացման խոչընդոտները վերացնելուն:

Հարգելի փաստաբաններ,

Ոստիկանության հետ հարաբերություններում խնդիրներ ծագելու դեպքում, կարող եք դիմել՝

- ՀՀ ոստիկանության հետ կնքված հուշագրով համակարգող փաստաբան, խորհրդի անդամ Կարապետ Աղաջանյանին- 091 100 878,

- Արագ արձագանքման հանձնախմբի համակարգող՝ Գևորգ Մկրտչյանին- 077 007792,

- ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավար Գևորգ Գևորգյանին- 091 483423

Հայաստանի Հանրապետության

փաստաբանների պալատի աշխատակազմ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })